«Թիմ Ռեսուրս» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի պողոտա, 20 շենք, բն. 1
Հեռ.՝ (+374) 98 03 18 89, 77 92 84 26, 77 72 65 63
Էլ. փոստ՝ teamresourcengo@gmail.com
regionnewsplus@gmail.com

"Team Resource" NGO
Adress: RA, Gyumri 20 Tigran Mets Ave. , aprt. 1
Tel: (+374) 98 03 18 89, 77 92 84 26, 77 72 65 63
E-mail: teamresourcengo@gmail.com
regionnewsplus@gmail.com

ՀՀ Արմավիրի մարզպետ
Արգիշտի Մեխակյանին

Հարգելի պրն. Մեխակյան.

«Թիմ Ռեսուրս» ՀԿ-ն, REGIONS TV-ի հետ համատեղ, իրականացնում է «Մարզային կյանքն իրականում» նախագիծը, որի նպատակն է բարձրաձայնել և վեր հանել մարզերում առկա խնդիրները, հանրայնացնել դրանք տարբեր համայնքների բնակիչների միջոցով, շրջանառել մեդիա հարթակներում ու հասու դարձնել իշխանություններին, համապատասխան կառույցներին՝ կամուրջ հանդիսանալով բնակիչների և որոշում կայացնող անձանց միջև: Ծրագրի շրջանակներում **Շիրակի, Արմավիրի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու** մարզերի տարբեր բնակավայրերում նախապես իրականացված հարցումների ամփոփումով վեր են հանվում կարևորագույն խնդիրները, որոնք հետագայում դառնում են բանավեճ-քննարկումների օրակարգային թեմաներ: Արդեն իսկ կայացել են Շիրակի, Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի բանավեճ–քննարկումները, որոնց ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան իրենց հուզող հարցերն ուղղել հրավիրված խոսնակներին, փորձագետներին ու պաշտոնյաներին:

Բանավեճ–քննարկումների ամբողջական տեսանյութերի հղումները՝ նամակին կից:

REGIONS TV-ի նկարահանող խումբը, այցելելով Արմավիրի մարզի համայնքներ, հիմնականում սահմանամերձ բնակավայրեր, հանդիպել և զրուցել է տեղի բնակիչների հետ, և նկարահանված տեսանյութերն ու հարցումները կհրապարակվեն կայքէջում և տարբեր սոցիարթակներում, կցուցադրվեն բանավեճ–քննարկման ընթացքում: Հաշվի առնելով մարզում առկա խնդիրներն ու դրանց լուծման կարևորությունը, ամփոփելով բնակիչների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, Արմավիրի մարզի բանավեճ–քննարկման օրակարգ է ներառվել կարևորագույն 2 թեմա.**1.անվտանգություն, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հեռանկարներ՝ հնարավոր վտանգներով և դրական կողմերով, 2. գյուղատնտեսության ոլորտի՝ տվյալ տարածաշրջանին բնորոշ խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:**

Ակնկալում ենք մարզային իշխանության ներկայացուցիչների, փորձագետների, մտահոգ և ակտիվ քաղաքացիների մասնակցությունը բանավեճ-քննարկմանը, ինչը հնարավորություն կտա քննարկել, վերլուծել խնդիրները և փորձել գտնել դրանց լուծման տարբերակները:

Հաշվի առնելով թեմաների կարևորությունը՝ հրավիրում ենք Ձեզ մասնակցելու բանավեճ-քննարկմանը՝ որպես խոսնակ:

<u>Բանավեճ–քննարկումը կայանալու է փետրվարի 7-ին, ժամը 15:00 -16:30՝ Արմավիր քաղաքում</u>
(հասցե՝ ՀՀ, ք. Արմավիր, Հանրապետության 10):

Հարցանքներով՝ ծրագրի ղեկավար Ամալյա Թումասյան
Հեռախոսահամար՝ 098 199186: